ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/120

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/14» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 03.12.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 03.12.2020թ.-ին:

04.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/120 համարի ծածկագիրը:

10.12.2020թ.-ին և 18.12.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.12.2020թ.-ին:

2. «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն 03.12.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի նոյեմբերի 27-ին ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հրապարակվել է ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/14 ծածկագրով գնանշման հարցման հրավեր:

Հրավերով սահմանվում է, որ այն կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի «ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ պատվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մեր ընկերությունը, հանդիսանալով բժշկական սարքավորումների խոշորագույն մատակարարներից մեկը ՀՀ-ում, ինչպես նաև ունենալով այս մրցույթում ընդգրկված բժշկական սարքերի մատակարարման և սպասարկման հարուստ փորձ, հետաքրքրված էր մրցույթին մասնակցությամբ:

Սակայն, հրավերի ուսումնասիրության ընթացքում մեզ համար պարզ դարձավ, որ մրցույթի հրավերը կազմվել է ՀՀ Գնումների մասին օրենքի և գնումների գործընթացը կարգավորող մի շարք իրավական ակտերի խախտումներով:

Մասնավորապես.

Ըստ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4- Ի N 526-Ն որոշման

16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

18. Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Տեղեկագրում չգտանք «ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի պլանի փոփոխություն, որտեղ ընդգրկված կլիներին այս գնանշման հարցումով նախատեսված սարքավորումները:»:

Ելնելով վերոգրյալից, «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Ընկերությունը ներկայացրած լրացմամբ, հավելել է հետևյալը.

«Ստացանք Պատվիրատուի դիրքորոշումը վերոնշյալ բողոքի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, լրիվ հասկանալի են թույլ տրված սխալի տեխնիկական բնույթը և բոլոր այն բացատրությունները, որոնք տրվում են այդ դիրքորոշման մեջ: Սակայն, մեզ համար, միևնույն է, անհասկանալի է մնում, թե եթե այդ սարքավորումների հույժ անհրաժեշտությունը կա, ապա ինչու է կազմակերպվել 15.6 հոդվածով գնանշման հրավեր, այն էլ 2020թ. դեկտեմբերին, այն դեպքում, երբ պարզից էլ պարզ է, որ ձեռքբերումը, միևնույն է, տեղի է ունենալու 2021թ.-ին: Ինչու՞ չի ներառվել անհրաժեշտ սարքավորումը 2021թ. գնումների պլանում և կամ ինչու չի հայտարարվել հրատապ մրցույթ:

Այսպիսով, լիովին հասկանալով և ընդունելով հանդերձ Պատվիրատուի դիրքորոշման մեջ նշված հիմնավորումները, միևնույն է, մնում ենք այն կարծիքին, որ նշված հիմնավորումները չեն կարող հիմք հանդիսանալ օրենքի խախտումով հայտարարված մրցույթի շարունակման և, արդյունքում, պայմանագիր կնքելու համար:»:

3. <u>«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/18005-2020 գրությամբ դիմել է «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 03.12.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 08.12.2020թ.-ին գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2020 թվականի դեկտեմբերի 04-ի գրության տեղեկացնում եմ, որ 2020 թվականի նոյեմբերի 27-ին «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կնետրոն»

ՓԲ ընկերության կողմից էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հրապարակվել է ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/14 ծածկագրով գնանշման հարցման հրավեր:

Հաշվի առնելով 2020 թվականի սեպտեմբերի 27-ի առավոտյան Ադրբեջանի Հանրապետության զինված ստորաբաժանումների կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողությունների հետևանքով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարված ռազմական դրությունը, ելնելով երկրում ստեղծված իրավիճակից, մասնավորապես նշված պարտականությունը Արցախցի ծագում ունեցող աշխատակիցի կողմից իրականացնելու փաստից (հիմք՝ 2020 թվականի մայիսի 15-ի թիվ 241Ա հրաման) և հաշվի առնելով վերջինիս մոտ տիրող տագնապալի տրամադրություններն ու ընտանիքում անձնական կորուստները, վերը նշված ծածկագրով գնանշման հարցման հրավեր հրապարակվեկուց տեղի է ունեցել տեխնիկական վրիպում: Միևնույն ժամանակ, նշված իրավախախտումը կրում է զուտ ձևական բնույթ և որևիցէ կերպ չի կարող խոչընդոտել և սահմանափակել հրավերին մասնակցելու դիմումատուի իրավունքները:

Բացի այդ, ելնելով նոր կորոնավիրուսի համաճարակի հետևանքով երկրում ստեղծված իրավիճակից, ինչպես նաև նշված բժշկական սարքավորումների ձեռքբերման հրատապությունից և հաշվի առնելով վերոշարադրյալը, խնդրում եմ վարչական վարույթը քննելիս տեղի ունեցած տեխնիկական վրիպումը համարել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք՝ քանի-որ իրավախախտումը կատարվել է անձնական կամ ընտանեկան ծանր հանգամանքների զուգադիպությամբ:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/120 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով 27.11.2020թ.-ին հայտարարվել է «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 27.11.2020թ.-ի թիվ 1 որոշմամբ, իսկ հայտերի բացման նիստի օր է սահմանվել 04.12.2020թ.-ին ժամը 11:00-ն ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 1 հատ ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման 3 տվիչով սարքը, գումարը նշված է՝ 0 և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33141174:

iv. www.armeps.am/PPCM/ կայքում առկա «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 23.11.2020թ.-ին կատարված 2020 թվականի գնումների պլանի փոփոխության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով (33141174/501, 33141174/502, 33141174/503) ապրանքի համար նախատեսված քանակը նշվել է՝ 0, գումարը՝ 0:

v. www.gnumner.am կայքում առկա տվյալների համաձայն՝ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/14» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգով ձեռքբերվելիք գնման առարկան, սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով, ներառվել է 2020թ.-ի գնումների պլանում:

vi. Գնումների պլանի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում 1 հատ ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման 3 տվիչով սարքը, գումարը նշված է՝ 0 և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33141174:

vii. Գնումների պլանը Պատվիրատուի կողմից հաստատվել է 01.10.2020թ.-ին և հրապարկվել կայքում 08.12.2020թ.-ին:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 03.12.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում,

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը),

3) պայմանագրի կնքում,

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ

կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

Հակառակ դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված ցանկացած որոշմամբ կխախտվեն գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Վերոնշյալ դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառվի գնումների պլանում՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման: Այս կարգով է միայն հնարավոր փաստել և հաստատված համարել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի՝ գնումների պլանի առկա լինելու հանգամանքը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով 27.11.2020թ.-ին հայտարարված «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 1 հատ ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման 3 տվիչով սարքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33141174:

www.armeps.am/PPCM/ կայքում առկա «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 23.11.2020թ.-ին կատարված 2020 թվականի գնումների պլանի փոփոխության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով (33141174/501, 33141174/502, 33141174/503) ապրանքի համար նախատեսված քանակը նշվել է՝ 0, գումարը՝ 0:

www.gnumner.am կայքում առկա տվյալների համաձայն՝ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/14» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգով ձեռքբերվելիք գնման առարկան, սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով, ներառվել է 2020թ.-ի գնումների պլանում:

Գնումների պլանի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում 1 հատ ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման 3 տվիչով սարքը, գումարը նշված է՝ 0 և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33141174:

Գնումների պլանը Պատվիրատուի կողմից հաստատվել է 01.10.2020թ.-ին և հրապարկվել կայքում 08.12.2020թ.-ին:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/14» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է գնումների պլանի՝ իրավական հիմքի առկայության պայմաններում: Սույն դեպքում, Կարգի 16-րդ կետի իմաստով, գնումների պլանը հաստատված և հրապարակված է՝ սահմանված պահանջներին համապատասխան, իսկ գնման առարկան՝ համապատասխան քանակների նշմամբ ներառված է գնումների պլանում: Ինչպես նաև թե պլանով և թե հրավերով Ընթացակարգի 1-ին չափաբաժնով սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով ապրանքը նշվել է ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման 3 տվիչով սարքը, որի համար նախատեսված քանակը նշվել է 1, գումարը՝ 0, միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ՝ 33141174:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Հանձնաժողովը, ընթացակարգը հայտարարելով Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, գործել է իրավաչափ, քանի որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի՝ 1 հատ ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման 3 տվիչով սարքի համար 01.10.2020թ.-ին հաստատված և www.gnumner.am կայքում 08.12.2020թ.-ին հրապարակված գնումների պլանով (փոփոխություններով) նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրով՝ 33141174, նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, որպիսի պայմաններում օրենքի վերոնշյալ հոդվածի կիրառումը չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել և գնման գործընթացը սկսվել է իրավական հիմքի

առկայությամբ՝ գնման առարկան ներառվել է գնումների պլանում, որն էլ հաստատված է եղել Պատվիրատու կողմից 01.10.2020թ.-ին՝ մինչև գնման գործընթաց սկսելը՝ 27.11.2020թ.-ը, ինչի արդյունքում Պատվիրատուի կողմից թույլ չի տրվել Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև Կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 03.12.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/120 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**